է) երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացմանն ու քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությանն ուղղված պայմանների ձևավորում,

ը) աջակցություն երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը,

թ) աջակցություն միջազգային երիտասարդական համագործակցությանը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման առաջնահերթ միջոցառումներն են.

ա) պետական երիտասարդական քաղաքականությանը վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործում,

բ) համալիր և նպատակային պետական երիտասարդական ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև հանրապետական ու մարզային մակարդակների բնապահպանական, սոցիալական, մշակութային, տնտեսական զարգացման պետական ծրագրերի մեջ երիտասարդության հիմնախնդիրների ներառում,

գ) ոլորտում պետական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով պետական ենթակառույցների ստեղծում (երիտասարդական կենտրոն, հանրապետական և մարզային տեղեկատվական-վերլուծական կենտրոններ, երիտասարդական հիմնադրամ և այլն),

դ) Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երիտասարդների, երիտասարդական միավորումների միջև հոգևոր-մշակութային, գիտակրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական և այլ կապերի հաստատում և զարգացում,

ե) ՀՀ երիտասարդության շրջանում բազմակողմանի հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացում, հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքում,

զ) իրենց վերաբերող որոշումների կայացման և դրանց իրագործման գործընթացներում երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների մասնակցության ապահովում տեղական և հանրապետական մակարդակներով:

Պետական երիտասարդական քաղաքականությանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները իրականացնելիս ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը համագործակցում է երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում պետական երիտասարդական քաղաքականության, մասնավորապես, դրա սկզբունքների, սուբյեկտների, իրականացման ուղղությունների, առաջնահերթ միջոցառումների և հարակից այլ հարցերի մասին:

Մայիս, 2005

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետական երիտասարդական քաղաքականության նպատակն է Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացումն ապահովելու նպատակով ստեղծել իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ ազգային ու համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և սեփական ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խորը գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման, ըստ ամենայնի ինքնահաստատման և ինքնադրսևորման համար:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ

Երիտասարդական քաղաքականության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմինը Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, որն ապահովում է պետական երիտասարդական քաղաքականության մշակումը և իրականացումը, աջակցում է երիտասարդական ձեռնարկատիրության զարգացմանը, տեղեկատվական և փաստաթղթային, խորհրդատվական և սոցիալական, մասնագիտական կողմնորոշման ու զբաղվածության երիտասարդական ծառայությունների ու կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը, երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի իրականացմանը, վերլուծում, ուսումնասիրում և կանխատեսում է սոցիալական գործընթացները երիտասարդության միջավայրում, դրանց ազդեցությունը պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա և այլն:

Պետական երիտասարդական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեում առանձնացված է հատուկ տող:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Պետական երիտասարդական քաղաքականության սուբյեկտներ են հանդիսանում.

ա) ՀՀ 16-30 տարեկան քաղաքացիները, ինչպես նաև 16-30 տարեկան օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ այն չափով, որքանով նրանց՝ Հայաստանի տարածքում գտնվելն առնչվում է համապատասխան պետական մարմինների պարտավորությունների հետ,

բ) Հայաստանում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնց անդամների տարիքային սահմանը չի անցնում 30 տարեկանից կամ որոնք զբաղված են մինչև 30 տարեկան քաղաքացիների շրջանում տարվող աշխատանքներով,

գ) երիտասարդ ընտանիքները, այն պայմանով, որ ամուսիններից մեկի տարիքը չգերազանցի 30-ի սահմանը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ պետական երիտասարդական քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

ա) պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում պետության, հասարակության և անհատի շահերի, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների համադրում,

բ) երիտասարդ քաղաքացիների անմիջական մասնակցության ապահովում երիտասարդությանը և ողջ հասարակությանը վերաբերող քաղաքականության և առանձին ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացին,

գ) երիտասարդների առողջության պահպանման, մասնագիտական պատրաստման և աշխատանքով ապահովման նպատակով պետության կողմից երաշխավորված սոցիալական նվազագույն ծառայությունների մատուցում,

դ) երիտասարդների ռազմահայրենասիրական ոգու բարձրացում, ազգային արժեքների արմատավորում, կրթական մակարդակի, հոգևոր և ֆիզիկական դաստիարակության զարգացում,

ե) երիտասարդներին վերաբերող միջոցառումների և ծրագրերի ֆինանսավորման դեպքում հասարակական նախաձեռնությունների առաջնայնություն՝ պետական մարմինների և հաստատությունների համապատասխան գործունեության համեմատ:

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական երիտասարդական քաղաքականությունը ենթադրում է փուլային գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի ստեղծում,

բ) երիտասարդության զբաղվածության և աշխատանքի ոլորտում երաշխիքների ապահովում, պետական երիտասարդական կադրային քաղաքականության իրականացում,

գ) աջակցություն երիտասարդական ձեռներեցությանը,

դ) պետական աջակցություն երիտասարդ ընտանիքներին,

ե) սոցիալական ծառայությունների երաշխավորված տրամադրում,

զ) աջակցություն տաղանդավոր երիտասարդությանը,